Լևոն Շանթ

Ուրվականներ

Ունիմ նկարչի տետրակ մը սիրուն,

որ ժամանակի ձեռքեն խլելով

տարեր պահեր եմ աչքերե հեռուն

խորքը հուշերուս, խորշ մը ապահով:

Առաջին էջը իրարու փարած

Թերատ գծերու ցանց մըն է նրբին,

որոնք հոն մրոտ խառնուրդեն հանկարծ

այն չար աղջկան դենքը կը ծնին:

Ուրիշ կուսական դեմքեր շարունակ

կը գտնեմ այնտեղ հայացքիս գերի,

միայն բոլորն ալ անորոշ, խառնակ,

անփույթ վրձինի մարգանք են թերի:

Անդին երազուն եւ ընկեր դեմքեր

կը ժպտին ինծի անուշ կարոտով.

իրենց նայվածքի թարմ մութերն ի վեր

բոցեր կը ժայթքեն. ե 'ւ կյանք, ե' ւ կորով:

Բանաստեղծական ֆանթազիներ ալ

պատկերներուս մեջ կան գծված հստակ.

Ոգեւորություն, Սեր ու Իտեալ,

եւ Գիտությունը `կին դիմակի տակ:

Ու խենթ իղձերու, սպասման, հուզման

եւ աշխատանքի, անհաս տենչանքի

հոն խառնափնթոր մարմնացումներ կան,

գծած ու ավրած, գծած կրկնակի:

Այո ', նկարչի տետրակ մը սիրուն,

որ մոռացության ճանկեն խլելով

իբրեւ նվեր մը գալիք օրերուն

պահեր եմ մտքիս մեկ խորշն ապահով: